ՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ

# ԽԱԹԱԲԱԼԱ

Գինն է 10 կ. Գաւառներում 12 կ. 1911, Շաբաթ, Յունւարի 29 -ին. Թիֆլիս. № 4

## ՀԱՅ «ՊԱՏՐԻՕՏՆԵՐԸ»




Лит. С. Быхова

Միանանք՝ ջարդենք, տրորենք այն խմբագրութիւնները, որոնք համարձակւում են հայ հաստատութիւնները քննադատել, առանց մեր հաւանութեան։

(Նորագոյն գործելակերպ-րէցեպտ։)

ԲԱՑՒԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
1911 Թ.

VI Տարի

# ԽԱԹԱԲԱԼԱ

VI Տարի

Երգիծաբանական-սատիրական պատկերազարդ շաբաթաթերթի
ԼՈՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ ԱՄԵՆ ՇԱԲԱԹ ԱՆԽԱՓԱՆ

Պաշտօնական օրգան պետական, ազգային, հասարակական և օտարազգի բոլոր մեծ և փոքր, յայտնի և անյայտ, պիտանի և անպիտան, փրկիչ և գլփիչ, անկեղծ և կեղծաւոր գործիչ-կործիչների և խայտառակիչների:
Անհրաժեշտ բերք բոլոր բնտանիքների համար
«ԽԱԹԱԲԱԼԱՆ» շատերին ծիծաղեցնում է, շատերին էլ ցաւեցնում, բայց ոչ ոքի հետ ոչ բարեկամ է և ոչ թշնամի: Խմբագրին կարելի է տեսնել, երբ քէֆները ուզի:
Հասցէն՝ Тифлисъ Музейнный пер., Редакція „ХАТАБАЛА".
Արտասահմանից՝ Tiflis Gaucas Redaction «Khatabala»
Խմբագիր-հրատարակող՝ ԱՍՏ. ԵՐԻՑԵԱՆ

«ԽԱԹԱԲԱԼԱՅԻ»
ԲԱԺՆԵԳԻՆՆ Է

| | |
|---|---|
| Տարեկան . . . . | [illegible] |
| Կէս տարին . . . . . . | 3 » |
| Երեք ամիսը . . . . . . | 1 » 50 կ. |
| Ամիսը . . . . . . . . . | — 50 » |
| Թիֆլիսում տարեկան . | 4 » — » |

«ԽԱԹԱԲԱԼԱ»-ի բաժանորդները կարող են ստանալ «ՍՈՒՐՀԱՆԴԱԿ»օրաթերթը պակաս վճարով, երկուսին միասին փոխանակ՝

| | |
|---|---|
| Տարեկան . . . . . . . . . | 12 ր. |
| Կէս տարին . . . . . . . | 6 ր. |
| Երեք ամիսը . . . . . . | 3 ր. 50 կ. |
| Մէկ ամիսը . . . . . . | 1 ր. 20 կ. |

100 տարով բաժանորդագրուել ցանկացողին 75% զեղչ
Ջրի կարդացողներին պէտք է նկարենք գլխիվայր:

## ԱԹԱՋՆՈՒՐԹՈՂ

Ես նուր իմ իմանում բանի զօրութինը-- հէյ դիդի հա քօռ ժամանակ. մէ վուխտ կէր իմ ջեհիլութինին հէնց գիդէի, թէ՝ աշխարքիս մէջ ծիծաղելուց լաւ բան չկայ, հիմի տեհնում իմ վուր փուղն էլ իր տիղը ունէ, արա ես վուր մէ էրսուն, քառսուն ան հարիր միլիօն փուղ ունենայի էնէնց կուլէի:

Էս սհաթիս էլ վուր մի քանի միլիօն փուղ ունենամ, Աստուձ գիդենայ, էսէնց չիմ ըլի:

Մա՜շ:

Հիմի վուր լսանում է, ջէր երրուրթի ժուգին աչքիրս բաց իմ անում ու փանջարեմէն դուսն իմ մտիկ տալիս, իրգնքի վրէն աստղիր իմ համրում, ասում իմ՝ էրնէկ էդ աստղիրից մէկը ան էրկուսը իմս ըլնէր, բարեգուրծութին կօնէի, միռնելու ժուգ էլ անդերձ կու գրէի, կենդանի ժուգս էլ դիփ կօջրր ու կրծանիս լաւ լաւ ժամանակ կու անցկացնէի. ամա հիմի ի՞նչ է իմ հալը, վուր միռնիմ մէ անդերձ էլ չիմ ունենայ, ու մաշ ամօթ չէ՞, վուր համ հայ ըլիմ, համ [illegible], համ Կալատուղով ու մէ անդերձ էլա չունենամ:

Խիլք է, խիլք:

Իմ ջէհէլութինի ժուգը ո՞վ էր խիլքը տւի ինձ:

Տօ բաղդը իմ ակուլթար ձեռին չէ՞ր. անդձեմէն կու բռնէի ու կու մանածէի էնէնց, վունց վուր քէփս տար. համա սաղ էլի. մարթս խանդիխան վուր էշանում է՝ էշանում է, էլի:

Մախլմա...

Էս միր Ակուփ Գուրգէնովը, էն վուր հիմի համ փուղով, համ ջանով կունձի է դառի, Աստուձ կինք տայ իրեն, գիդիք թէ խիլունք է:

Վա, դանա չիմ գիդի, խիլքը դրա մամէն էրգրումէմին է բերի:



Ազգային բարերար
ԱԹԱՆԱՍ ԺԱՄՀԱՐԵԱՆ
Վախճ. 1910 թ. դեկտ. Մոսկուայում.

Էլած չէլածը էստի է ձարի, թէ ջիբումը թէ գոգրումը. ու փուղն էլ էն զօրութինն ունէ, վուր թէկի մարթը փուղ ունէ՝ տուտուց էլ ըլի—խիլունք կու էրենայ:

Ա՜յ, հիմի տեհէք էսղանցի հայ հարուստնիրուն--Մանթաշովի վրէն չէ իմ խուսքը, նա քաղքցի է, էտու համա էլ լաւ մարթ ու խելունք է ու կուլի—էն մէկիլները ով փուղ ունէ, խիլք չունէ. համա փուղի զօրութինեմէն հեստի ին բռնում իրենց, կօսիս ինդաւուրինր ըլին ու էդու համա էլ խիլունք ին էրեւում: Ինչ վուր է, սսած է... սսածը շատ բան է, ով է իմանում ղուրթը:

Էգոպուսէլ մարքարը իր դաւթրումը գրում է, մարթ, կօսէ, վուր փուղ վունչ ունէ, խիլք էլ չի ունենայ, կօսէ,—էս ինչի համա է սսած, հալբաթտա խասիաթ է. հիմայ վուր ես փուղ ունենամ, ես գիդամ վուր խիլք էլ կունենամ, ու էդու համա էլ չալիշ իմ գալի, չալիշ իմ գալի ու ջէր մէ ճամփա չիմ գթի, վուր մէ միլիօնչի դառնամ:

Հա, էն էլ իմ ասում, փուղ, թէ վուր ունինամ, միլիօննիր պտի ունենամ, թէ չէ՝ հազարնիր, տասնեակ հազարնիր հիմի էլ խօ ունիմ, ամա փող չգիդենաք—հօպօպնիր:

Հա խուսք էկաւ. հօպօպնիրն էլ լաւ բան է. այ—լաւ-լաւ հօպօպնիր ճրիլմրիլ, քու արևը գիդինայ հեստի ղւաթ է տալի մարթուն, վուր քու հաւնածը:

Ան հօպօպ մարթն էլ մի բան չէ, աթմօրթին համ փուղ՝ միլիօննիր չունենայ, համ հօպօպ—էտ ջլիս խօ տնաքանդութին է, մեռնիմ իմ բաղդին, էլի հօպօպնիրը մի քիչ ղւաթ ու զօրութին ին տալիս հուզրումը:

Վա՜, համ անփուղ — անմիլիօն, համ ան հօպօպ—էդ վունց կուլի:

Մէ-մէ ջէր ճրէլ մրէլներս վուր գալիս ին, Գոլովինցկով էնէնց թաշախուստով իմ անց կենում, կօսիս նամեստնիկը ես ըլիմ. դզլբաշի շահին մարթատիղ չիմ դնում ու օսմանլինէրու խօնթքրին իսկի չիմ էլ հաւնում:

էդ կի չէ ու ասում ին, միթոմ էդ օսմալւի Ստամբոլ քաղքումը, կօսէ, հայ տղերքն ու մդերքը, կօսէ, խիլքի վրէն չին, կօսէ, ուզում ին, կօսէ, վուր աշխարքը շուռ բերին, կօսէ, ումը ռաստ ին գալի «սոփա»ին ուտեցնում, կօսէ. դուք էլ կու գիդենաք թէ էդ «սոփան» մէ լախաթլոքումի թաւուր բան է. չէ էտէնց չէ, սա ուփրօ ուրիշ թաւուր է. ուտողի մէջքը ան փափուկ տիղերը մի քիչ կապտում է, իժում էլ ուռչում է. հա հայեվար ըէցէպտ է:

Աստուծ օխնեսցէ. ասում իմ Է՛ վուր հայերս խիլունք ինք:

Մէ բան էլ ասիմ, ասում ին միթոմ թէ միր գոլովա Խատիսովը, դէպէշ է տացի պարուն Զումեմէն, գուզիմ գամ, կօսէ, Կավկազ՝ ու Թիֆլիզում ձիզ հիդ ռաստ կու գամ, կօսէ:

Զունքի հիմի էդ Զումէն շատ է սիրում մկնիր, կօսէ, գոլովէն հրամանք է արի՝ լաւ-լաւ ու չաղ չաղ մկնիր դթիք, կօսէ, վուր պարուն չումին լաւ պատւինք, կօսէ:

Հա էն էի ասում, հիմի վուր իս հարուստ, շատ հարուստ ըլէի, կու թողնէի՞, վուր էդ լաւ-լաւ մկնիրը թէկի էտէնց համով է՝ պ. Զումի համա պահիլ տայի՞ մուժուժ—ինքս ի՞նչ էի անում, իս կի պակա։ իշտահ ունի՞մ:

Շատ իմ ուզում հարստանամ ասի. էն օրն էլ խելիմ ժուգ փիքր արի, փիքր արի էդու վրէն ու վիկացայ ու գնացի միր քաղքի բանկիրը, տեհնիմ, ասի, էգէբա ինձ բանկերում տուն ու դուս գնալիս տեսնողները հարուստ գիդենան, վիկալնին ու ինձ էլ Մանթաշովի դաւերիս անին:

Էտէնց էլ էլաւ. ռաստ էկայ բանկի դրանը մի ճանանչի:

—Հը Գասպար, կօսէ, էստի ինչ իս անում, կօսէ:

—Վունչինչ, մէ հազար թումանի փուղ ունիմ ասի, տանը չիմ ուզում պահի ասի, ով գիդա ասի, խիստ ձմիռ է, տունը պաժար ըլի, փուղերը էրւի, ասի:

—Վա՛, դո՞ւրթ, կօսէ, էդ ղդամ փուղ մինչկի հիմի տանը ի՞նչի իս պահի ասի, կօսէ:

—Չէ, էդ ձեռաց փուղ է, ասի, մինձ փայը բանկերումը՝ եաշչիկներումն է, ասի:

—Լա՛ւ կաս, կօսէ ա՛յ, Գասպար ադա—իս էնէնց էլ գիդում էի, կօսէ, դուն խիլունք մարթ իս, հալբաթտա անդիրձ էլ դրիլ իս, կօսէ:

—Վա՛, մաշ առանց անդիրձ կուլի՞, ասի:

—Ո՞ւմը ինչ իս թողի, կօսէ:

—Վուր մեռնիմ իժում կիմանաք, ասի:

Սա գնաց մինչկի գետինքը գլուխ տալով. ռաստ էկայ միր գուրձիչներից մինին, վուր մէ քթի, մազ է կօսիս, ակռիքնիրը մէ գլուխ ցաւում է:

—Գասպա՛ր, Գասպա՛ր էստի ի՞նչ գուրձ ունիս, կօսէ:

—Ով ասի, տօ՛ ի՛ս ասի, դուն ի՞նչ գուրձ ունիս ասի, թէ չէ բանկիրը իմ մոգոնած է ասի, վուր ունենամ—վուր չունենամ բանկերում...

Էլ մուլափ չերիդ, վուր խուսքերս վիրջացնէի:

—Հ՞ը, բան ման ունիս կօսէ:

—Վա՛, մաշ ախմաղ իմ, ասի:

—Վա՛յ, քու հոքուն մեռնիմ, Գասպար ջան, կօսէ, դուն վուր կաս ասկի պէյծառութին իս, դուն վուր կաս քաղքի ալ վարթն իս, միր թագն ու պսակը, միր... միր սրտի զարթը... ու էլի հեստի խուսքիր խարջից, հեստի փաթաթւում էր, քուրքս հանելում օքնում, կօսիս, իմ նասլէդնիկը սա պտէր ըլի:

—Շատ ապրիս, իմ տարսը դ՞առնաս ասի:

—Ի՞փ ուփրօ լաւ կուլի, վուր քիդ մօտ գամ մէ լաւ բանի վրան գուզիմ ձիզ հիդ փիքր անի, կօսէ:

—Իփ վուր կամքդ տայ, ասի:

—Տէլեփուն ունի՞ս, կօսէ:

—Միր թաղումը ունին, ասի:

—Ձիր տա՞նը:

—Իս, ասի, չիմ պահում, տէլեփուն, չունքի դոխտուրնիրը ասում ին, վուր ջանիս զարար կօնի, ասի:—

—Հա, թէ վուր էտէնց է, լաւ իս անում, վուչինչ: իս կու անցկենամ, ու կու հարցնիմ, թէ վուր հրամանք կօնիս կօսէ, կու մտնիմ, թէ վուր վախտ չիս ունենայ, էլ ի՞նչ խուսք՝ կու մուլափ տամ, կօսէ:

Էս խուսքերում էի, շատիրը խիլքը խարջելում, մինչկի մարթիքը իմացել էին, վուր իս փուղ ունիմ ու տաս հազար թումանը գուզիմ նոր մէկանց բանկը դնիմ, մէ տեհնէ՞ք թէ էդ «շատիրը» շաշիրը վունց էին դիրամալանիր անում, վունց էին քծմւում:

—Ու՞ւ շէնի կի ճիրիմէ, ջէր էս մենակ հանաք է, ասի, բաս վուր դուրթ փուղ ունինամ, խօ ջիխդան...

Հա էն էի ասում. լաւ բան է փուղ ունենալը, հիշտ բան էլ է փուղ դագիլը, փիքր արի տեհայ վուր էս սնաթիս վուր մէ բանկ բաց անիմ, ակն էլ փրգւած ու իս էլ.

Մա՛շ:

Էդու համա իս մէ պրօէկտ իմ շինի մէկ էլ շաբթին կու գրիմ, թէ խիլք ունիք դուք էլ շինէք, տեսնինք ո՞վ աւիլ շուտ կու դայի:

(Էլի կուլի)

Գասպար Կոլատուզով
Խաթաբալա ամենայն հաուց

***

### ԽՐԱՏ ՀԱՑՈՒ[illegible]

Գրւելով կըկարդնես թէ մէկ սառում բռնես
Եւ փրկւելու նորէն դաւը հնարես:

—

Ձկայ ոչինչ աշխարհի վրայ ուրախ բան,
Թէ կորցրածիդ չէ նա համապատասխան:

—

Երբեմն խայթից չնչին փոքրիկ մծղկին
Խորին քնից զարթնում է մարդն ահագին:

—

Ունեորը աղքատնքի չանաչող
Նոյն է դիակ շուք իւր թաղման չանաչող:

—

Գեղեցկութեան արժէքն է զանձ ահագին,
Թէ խելքի. ոչ յիմարի է ձեռքին:

—

Մի հաւատար սրիկան անձանց քո զլուխին
Նոյն է. կոյրին գրելիս պատգամ ակնոցին:

Սանդրիկ-ապէր

## ՄԽԻԹԱՐԱԿԻՐ ՄԵՐԻԱՆ

Մերվ, 10-ին յունւարի

Իմ ազիզ աչքի լիւս Քեասպար ղայի

Ջանըս քեզ մատաղ դէ հինչ ասիմ, Աստւածանան մխիթարւիս, քեզ էլ յայտնի ա, վէր մեր հոգեոր Հայրիկ Մաթէոս էրկուինջինըն էլ կեանքը ազգին բախշից:

Աստւած հոքին լուսաւերէ ու դրախտ տանէ, շատ լեաւ Հայրիկ ա իլալ, համմա վէր Աստւած ապրելէն զարուլ չկացաւ, մեր ձեռքներաւը հինչ կարողա կենայ:

Քեասպար ջան, զորթ ա, սըրտնեղւածըմ, կիրըմըմ թա «Աստւած զարըւլ չկացաւ», համմա չէ. իմ սրտէս այսն ա, վէր Աստծու մաննը էտ կործըն խառնը չի, աւ էն Ըրկաթէ Մարթը իւրան պընդակն օլումալը չմեռաւ:

Վեհափառ Կաթղկոսը սուրփ էչմիածինի կանքը նատելաւ, տեսաւ վէր էչմիածնըմ վէչ մին միաբանութուն չկան. էն-կըլխակէր [illegible], վէչ աթոռն [illegible] ցած օրէնք սրփութունըն կըտաըըմ, վէչ մինու տեմ թալակնէրն սարքմ. անջախ մին մինու վենիի տակ քանդըմ. մին խօսքաւ ամեն մինը օղըմա կապը կտրած պել ճորու նման, պոփ օղածը անի, էչմիածինը քարուքանդ անի, միմիան թա փորը լըցնի, ու իւրան սրփոց սուրփի ծեացնի: Լըխ էտ տըսնալաւ, Ըրկաթէ Մարթը օրանըը հիլւիլաւ, դարդ ու ցաւի եկաւ ու տարէն պըլլըրած բողմիշ իլաւ, մեռաւ:

Լիւսահոքի Խըրըմեան Հայրիկը լըխ էտ օյինբազութուննէն տեսնըմար, ու չինքի շատ պարեհոքի, թուլ պընաւորութ[illegible] օնէր, լըխին էլ ներումար. [illegible] թազա Հայրիկ Իզմիրլեանը օղըմար [illegible] օյինբազութուննէնի վէրջը տայ, [illegible] [illegible]ճին էն օրընըն քցըմ վեր հըրըմարդկան ա կիրըմ, ինքն էլ հրաժարըմ յաւիտեան:

Քեասպար ջան! մհինգ գիտըմըմ Իզմիր-

## ԺԱՆՏԱԽՏԻ ՊԱՏՃԱՌՈՎ.

(Թիֆլիսի բոլոր պատերի վրայ կպցրած է քաղաքային վարչութեան կարգադրութիւնը. մկների դէմ պատերազմ մղելու առթիւ).




**ՄԿՆԵՐԸ ԱՌՆԵՏՆԵՐԸ ԿԱՐԴՈՒՄ ԵՆ**

—Հի՛, հի՛, հի՛, հի՛. մենք էլ ի՞նչ պտուղներ ենք, որ այդպէս շուտ ընկճենք է՞...

## ԱԶԳԱՅԻՆ «ԳՈՐԾԻՉՆԵՐԸ»




Կ. Պօլսոյ թերթերը հաղորդում են, որ մեր ազգային գործիչները տեղափոխւում են Ամերիկա.. այնտեղ ապրելու համար։

ეროვნული ბიბლიოთეკა

լեան Հայրիկը էտ օյինբազութիւնիէն տըս-նալու, մաքըմը սատծ կինի «փաք Սուլ-թան Աբդուլ Համիդի, վէչ փաք էչմիածնու, միապանութեան»։

Ընցածը ընցած ա, մեռածը չի կենթա-նանալ մէնիգ պետմա մին թաէըր անիլ, էտ անաքանդ ըլըղըմըայքի սևակլօխներէն ուրփ էչմիածնան տեւս անել. թէչ նա «Ըրկաթէ Մարթ» չընի «Պըղընձէ Մարթ» ինի ս. էչմիածնըմ հէրա կարըմ արդամ ա-նի։ Եթա հայ ազգը ինձ լըսի, անպատճառ էտ «օյինբազչիներան» մինին կաթղկոս կը-ճոկի. չիւնքի ըտրանք իրանց մէչի պանը լեաւ կըհասկանան. պենա թա էլնա Ըստամ-բոլան ճոկից, էլնա Իզմիրլեանի օրընըն քը-ցելու։ Թուրքը անօրէն ա, համմա խօսքը օրինաւոր ա, ասըմա՝ իլան ջանիմի, իլան բալասը օլար։

Մեր աչքի լիս գեմլեակ, ուստաբաշի զուռնաչի ստատունոյ, օբէր խաթաբալխօ, բիձա Տըմբլաչի Խաչանը, էչմիածնըմ աքին-չի ա, լօխ էտ օյինբազութիւնէն տեսնըմ ա ու վէչ մին պեան չի կիրըմ. չի՞նի թա դա էլ լինի ըլտրստսըմ, ըպըգայըմ զուռ-նա ածըլան—ափինչութինը զըռալ տընել ու սևակլօխների ջեարկը մանել։

Գալոյ-Թաէ[illegible]

# ՅԱՆԿՈՒԹԻՒՆ!

Լեռնե՛ր, հիսաքա՛նչ, բարձրահա՛ս լեռնե՛ր
Հոգիս զայրի՛ս է թեւ առած դէպ ձեզ.
Տենչո՛ւմ եմ՝ հարբել զով զեփիւռով ձեր՝
Ննջել լանջերին ձեր արեւստես...

Խրոխտ բարձունք՛ներիդ Նուրբ ծաղիկնե՛րից
Հիւսեմ՝ անկողի՛ն... օձերից հեռո՛ւ
Այրեմ՝ ձեր յոյսով ու բոյր զեփիւռից
Կարօտս առնե՛մ—զգւենք մէկ-մէկո՛ւ—

Անհուն բարձունքից աշխարհը դիտեմ
Եւ թռ՛չնս թափեմ նախանձ մարդերին...
Եւ այնտեղ մե՛նակ ձեզանով ապրեմ—
Հարբեմ բուրմունքով անուշ լեռնային։

Վշտակիր սի՛րտս—մահւան ժամանա՛կ—
Ձեր կրծքին թաղե՛մ... եւ հա՛ւք ու հովե՛ր
Տշնչան, երգեն փսեմ՝ շա՛ւ ակա՛ն...
—Ա՜հ, տենչում եմ ձեզ—երկնահա՛ս լեռնե՛ր։

Նարգիզ



# ՄԸՆՐՈՒՆՔ

—Ալէքսանդրապոլից մինչև Գիւմրի քա-նի՞ վերստ է, հարցնում է մէկը իր խօսակ-ցին։

—Ինչքան որ Ելիսաւետպոլից մինչև Գանձակ, պատասխանում է խօսակիցը։

## ԱԾԽԱՎԱՃԱՌԸ

Խարճ ուգլէյ... կանչելով շրջում էր փո-ղոցներում ածխավաճառը։

—Ի՞նչ արժի մեշոկը, հարցնում է գնող-ներից մէկը։

—Ես մեշոկը չեմ ծախում, աղաջան, ա-ծուխն եմ ծախում։ Խարճ ուգլէյ.

—Լաւ, ի՞նչ արժի ածուխը։

—Տաս շայի, աղա ջան։



ՊԵՏՐՈՍ ՍԻՄԷՕՆԵԱՆ
Վախճ. 19-ին յունւ. 1911 թ. Թիֆլիս.

—Է՜ է, շատ թանկ է։

—Լաւ մեշոկներ են, աղա ջան։

—Ես մեշոկը չեմ ուզում, պատասխանում է գնողը։

## ՈՒՍՏԱՅ ՌԱՔԷԼԸ

Ուստայ Ռաքէլին պատւէր էին տւել, որ մի դագաղ պատրաստի։

Առաւօտ էր, մի ժամից յետոյ պէտք է գային դագաղը տանելու։ Դագաղը պատ-րաստ էր, մնացել էր միայն տակի տախ-տակը խփելու, բայց, հակառակի պէս, 4 մեխից աւել չունէր։

Ինչ արած, ստիպւած այդ 4 մեխը խփում է տախտակների անկիւններում։

Տանում են դագաղը և հանգուցեալին մի կերպ մէջը տեղաւորեցնում։

Հանգուցեալին հանգստարան տանելիս, դագաղի յետևից գնում էր և ուստա Ռաքէ-լը ու հիանում իր շինած դագաղով և շու-շուտ ընկերներին հարցնում.

—Հը՛ ինչպէս է, լաւ դագաղ եմ պատ-րաստել թէ չէ։

Տիրաջիանի վերևքը [illegible] տախտակը չրխկում է, պոկ գալիս և հանգու-ցեալը ընկնում է գետին։

Ճարահատեալ մարդիկ, դագաղը շուռ են տալիս, թոկերով կապկապում և հանգուցեա-լին պառկացնում նորից։

—Է՞դ էր քու շինած լաւ դագաղը, որ էդքան գովում էիր, ասում են Ռաքէլին յուղարկաւոր ընկերները։

—Ի՞նչ անեմ, չորս մեխից աւելի չունէի։ Հուսարն էլ՝ հէնց էդ է, որ չորս մեխով այնպէս էի պինդ շինել, որ էսքան ճանա-պարհ եկանք և միայն մի տեղ տախտակը պոկ եկաւ, պատասխանում է ուստան։

## ԳՈՐԾ ԽՆԴՐՈՂ ԿԻՆԸ

Մի պառաւ կին գնում է քաղաքային վարչութեան անդամի մօտ և խնդրում.

—Պարո՛ն, տղաս Ներսիսեան դպրոցն ա-ւարտել է, ինքը լաւ հաշւապահութիւն գի-տէ և մի քանի տարւայ էլ փորձառութիւն ունի, խնդրում եմ, վարչութեան մէջ մի գործ տաք նրան։

—Մայրիկ, մեզ մօտ միայն մշակի գործ կայ. եթէ տղադ կարող է հող փէն ածել, քար կրել, թող գայ, տեղ կանենք։

Այդ կինը մի ուրիշ տղայ էլ է ունենում, որը մշակութիւնով է պարապելիս լինում։

Հետևեալ օրը կինը գնում է միևնոյն ան-դամի մօտ և նորից խնդրում.

—Մի տղայ ունեմ մշակութիւն անող, խնդրում եմ, գործ տաք անելու։

Անդամը չճանաչելով այդ կնոջը՝ ասում է.

—Մեզ մօտ հաշւապահի և առհասարակ ուսում առածի տեղ կայ, մշակի տեղ չկայ։

—Էն ժամանակ ուսում առած տղիս գործ չունէք, խնդրում է կինը։

—Ա՜խ, դուք ուսում առած տղայ էլ ու-նէ՞ք... մտածման մէջ է ընկնում խրատա-կան.—ուղղումում բարեկամ ունէք, թէ՞ չէ, հարցնում է նա։

—Չէ՛, պատասխանում է կինը։

—Գիտէք, տիկին, ներկայիս մեզ մօտ ոչ ուսումառածի գործ կայ, ոչ մշակի, ասում և կարականապէս յայտնում է անդամը և կը-նոջը ճանապարհ գնում։

Փարեմուզ



ეროვნული ბიბლიოთეკა

խանում էի, ասում էի՝ բանն աչող է գնում, ախ... վուր շատ էր փաշտացնում, հարցրի տօ, ի՞նչ է պատահի քիզ, ախ, էդքան փաշտալ կուլի, ախ... ապուստրակ խօ չի՞ս...

--Ի՞նչ ի՞ս ասում տօ, կօսէ, ճամփին մըրսեցի կօսէ, էս անդիր տիղը ասւրղօ ընգայ, կօսէ... ամա իմ հախս է ամէ, էս ցուրտ զիամաթում էկայ էլի ամէ... յիդն էլ աւելացրից, Արտուշ ջա՛ն, հիմի քախկում ղասրի դուքան իմ բացանում, կօսէ, «Խաթարալիմէն» ձիո վիկալայ կօսէ... Է՛, ախ կեհամ մի քանի հարուր օչխար կաանիմ. ախ, ու ինձ ու ինձ դինջ տուստուր կօնիմ ախ, չունքի հիմի ղասաբնիրը մէկ էրէս ին արի, խուսք ին կապի էլ օչխար չին մօրթում,—գորոդսկոյի ուպրաւին խնդիրք ին տւի, թէ՝ զարար ինք անում, կօսէ, տաքցիէն աւելացրիք կօսէ... իս էլ ի՞նչ անէի ախպէր, «Խաթարալում» գրին էլ, էլ ձեռք չէր տալի, թէ դրուստ բան էի գրում նեղանում էին...

Էս ախլն էր ու ձիանիրով օչխարների փարախը հասանք։ Խէլում վուխտ հալա մտիկ արաւ օչխարներին, խան մէկը, խան մէկէլը արնդղից ու իժում տաւ, ջխտին ի՞նչ տամ կօսէ...

—Դրուստն ասիմ, ախ, քու խաթրու, ջուխտը 10 մանէթով կու տամ, ախ...

—Չէ ախպէր, ասմէ, կտրական կօսիմ, օխտը մանէթ կուտամ, ասմէ, ջըեմէն խօսբի ռանգ հարուրանոցնիր, էն դրախտի շպալիէրնիրը վուր շանց տւից, ապի չէկայ, իս էնէնց գիդէի թէ կու աւելացնի ախ։ Ձին թամքից ու վրէն նստաւ, մաթրախ խփից ու է հայդա գնաց ու գնաց։ Ջիգրս էկաւ, աչկիրս բաց արի, տեհնում իմ վուր էլի Սաքուլի դուքնումն իմ պառկած, մի ախ՝ էրազումն իմ էլի... ամա էլի չիք աւտում, նուր մէկանց աչքիրս խփեցի, կանչում իմ, հարա, իմ տալի... արի լա՛ւ, օխտը մանէթով տար ախ, ամա ումնիս կանչում, ում մուլթաքեն իս քըքըրում... Ա՛յ, էդ տնաշէնը էսպէս բան արաւ գլխիս, էրա-

նեանը պարծենում է թէ ամեն ինչ ինքն է անում և բոլորովին մենակ է աշխատում, այն ինչ. ամեն օր հիւրանոցներում ու կաթնատներում քէֆեր է անում և օրեկան քիչ-քիչ 10—15 կճուճ մածուն է ուտում, (էն էլ էս ձմեռ ժամանակ) և կրկնակի տաճկական սև ու թանձր ղայֆէ խմում, տասնից շաքար·

## ԱԽՈՒՐԵԱՆ

Որքան Ախուրեան գետը օգտակար է տեղերքի բնակչութեան համար՝ նոյնքան և «Ախուրեան» թերթը հայութեան համար։ Թերթը Ալեքսանդրապոլու թխուող համեղ լաւաշներին է նման։ Իսկ և իսկ արլաների ուտելու և կարդալու բան է։ Ասում են, որ թանթանաւոր ու ոսկեճակատ արլաները այդ թերթը շատ են սիրում։ Որ այդպէս է, թող ատով գլխով իրենց լինի...

ղումն էլ դինջ չի թողնում ինձ... բաս իմ մագիէր նուր տարին շնուհկէ ու մի ղայիմ պռօշտի արա..

**Օչխարապան Արտուշ**

## ԳՈԿԻՐԱԾ ՏԵՐԵՒՆԵՐ

### 1. «Ներողութիւն»...

Գ. Հէքիմեանի տանը պարահանդէս էր... Սալօնում բազմաթիւ հիւրեր կային։ Յանկարծ, սեղանատնից աղաղակ է լսւում։

Տիկին Հէքիմեանը շտապում է այնտեղ և տեսնում է հետևեալ պատկերը։

Ջահիլ աղախինը բարձրացել էր աթոռի վրայ՝ լամպը վառելու, և մնացել է փայտացած, ամբողջովին կարմրած, ջգրուց խեղդւելիս... Նրա առաջ կանգնած է նորընծայ բժիշկ Բուռնութեանը՝ շփոթւած ու վրդովւած...

—Ի՞նչ պատահեց, Մարի,—խիստ կերպով հարցնում է տանտիկինը Մարիին։

—Ներեցէք, աղջիկպարոն,—փնթփնթում է ամօթահար եղած աղախինը,—ես ուզում էի լամպը վառել, իսկ պարոն բժիշկը անսպասելի կերպով ոտքիցս խիստ կսմթեց։

—Ախ, պ. բժիշկ,—մայրական մեղմութեամբ խրատում է նրան տիկ. Հէքիմեանը,—մի՞թէ կարելի է այդչափ մոռանալ և քոծի հետ ընկնել...

—Աստծու սիրոյն՝ ներեցէք, յարգելի տիկին, սխալւել եմ... ես կարծեցի թէ ձեր աղջիկն է...

—

### 2. Ճիշտ ճշտանը.

—Ախ, պ. բժիշկ, օգնեցէք, իմ կինը...

—Ի՞նչ է պատահել։

—Նա սկսել է ջղերով տանջւել։

—Ահա՛ թէ ինչ։ Իսկ ի՞նչ է նա այժմ զգում։

—Թէ ինչ է նա զգում, ես այդ չգիտեմ, սակայն գիտեմ, թէ ինչ եմ ես զգում։ Աստծու սիրոյն՝ օգնեցէք։

—

### 3. «Հաճոյախօսութիւն»։

—Ձեր թատերգութեան ներկայացումը, պ. Բուլբուլեան, զարմանալի կերպով ուրախ անցաւ... մեր օթեակում մի պարոն խիստ ծիծաղաշարժ անեկդոտներ էր պատմում։

**Եզոպոս ծայրահեղ վարդապետ**

## ՀԱՍԿԵՐ

«Եթէ «Հորիզոնի» ասածներին հաւատալու լինինք, «Հասկերը» պէտք է համարել չնաշխարհիկ թերթ, որի ամեն մի №-ում տպւում է բոլոր աղւէսների (այսինքն Լիսիցեանների), կատուների, մկների, նապաստակների և խլուրդների կենսագրութիւնները։ Եւ դրանց գրողները, բոլորն էլ իսկական պատենտովի (ցուցանակաւոր) մանկավարժներ են, որոնք ըստ երևոյթին, ինչպէս ցոյց են տալիս նրանց գրւածքները,—վարժեցնում են միայն աղւէսներին, կատուներին, մկների և այլ կենդանիների, որ շարունակ և մի գլուխ նրանց հոգեբանութիւնից ու գործերից են գրում և այդպիսով ամսագրի ընթերցողների աշխարհայեացքը լայնացնում։

—

## ԱՇԽԱՐՀԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ

Քանի մը հազար տարի էսուց առաջ, Աստւած մտածեց ստեղծել աշխարհը, և ստեղծեց. յետոյ լուսին, արև, աստղեր, հրեշտակներ, սատանաներ, ձկներ, գազաններ... Է՛հ ինչ գլուխնիդ ուցնիմ այն ամենը, զինչ որ կըգգանք ու կըտեսնենք այս աշխարհում... հըմա Աստւած ադքանով չբաւականացաւ։ Այժմ ալ մտածեց ստեղծելու մարդ·արարածին և ստեղծեց Աթամին, հըմա ադով էլ չբաւականացաւ, վերջն ալ մտածեց ստեղծել Աթամին համար ընկեր մը... և ստեղծեց աթամին կողէն Եւային... հըմա ոչ ստեղծէր, փուչ ստեղծէր Եւային տեղ ու խեղճ Աթամին կրակի մէջ չձգեր, այդ կինը ինչպէս կըպատմեն հրէշ մըն է եղեր Աթամին հըմար...

Կին...

Լսած կաք աս անունը... ó... ադ արարածին ես չիտեմ ի՞նչ անուն տամ... Ը՛մ կի՛նը... ադ, ադ... օձ մըն է... իժ... կակարիճ... դև՛... էհ, էլ ինչ անուն տամ չիդեմ... աւելի թունդ ըսինք՝ իսկական դժողք մը եղեր է ադ Եւան...

Դէհ ինձ լսէք, բան մը պիտի պատմեմ ձեզի...

Աստւած երբ պարգևեց դրախտը Աթամին և Եւային՝ ըսաւ անոնց.—«Կերէք զինչ կամենաք, հըմա խնձորին ձեռք չզարկեք»...

## ԺԱՅՌ

Մի ժայռ, որը այնքան դիմացկուն է, որ—փշրւում է ամեն մի թեթև շնչից և ամեն մի մեղմիկ հպումից։ Առաջին թերթն է, որ իր ազգաւ առաջնորդողներով՝ կարողանում է հասարակական կարծիքը և միտքը ղեկավարել։ Խմբագիրը կարելի է ասել, որ «լաւ տղայ է» այնպէս որ երբ քելեխներ է լինում—կաս կարմիր դէմք է ստանում և թէև ուտելու ախորժակ է ունենում—բայց զսպում է իրեն մարդկանց ներկայութեամբ, սակայն երբ հեռանում են մարդիկ՝ նա իր բանը տեսնում է...

**Քոն-Սանճենոն**

—Է՜հ, Աթամը չէր մտածում խնձորին վրան... հմմ, աղ Եւան... աղ ինչ կնիկ մըն է եղեր... կրակ ու պատիժ բիլա... Էրիկմարդուն նախան բանից և ըսաւ՝ տուր խընձորը... կնիկ է էլի, հօ կըճանչնաք՝ ի՞նչ պտուղներից է...

Է՜ն խեղճ Աթամը ինչ էնէր, գլուխը որ քարով տար... Եւան անքան ըրա՛ւ, որ խնձորը կերաւ... է, ինքը կերաւ ջհայնում... Աթամին էլ կերցուց ու երկուսով էլան չիփ-չփլախ...

Աղ ատեն Աստծու հրեշտակը երևաց ու կանչեց...

—Աթա՛մ, հիւանդ ի՞ս...

Ձայն չկար ..

—Աթա՛մ, հետու ի՞ս...

—Տէ՛ր, աստ իմ...

—Աթա՛մ, դուրս էլ հիւղիս...

Տէր չփլախ իմ...

—Աթամ ինչի ես չփլախ...

--Տէր, Եւան զինձ խնձոր կերցուց...

Յանկարծ լսեց Եւին ձայնը.

—Տէր սուտ կըսէ, ինքը կերցուց զինձ...

Է, տեսնիք կը հը՛մ ինքը կերցնի հըմ Աթամի վրայ ձգէ մեղքը... հը՛ ի՞նչ կասէք ասոր...

Է՛ հրեշտակն էլ վերցուց ու դրախտէն վռնդեց Աթամին ու Եւային..

Դէ՜հ, ըսէք տեսնեմ, Աթաճներ... աս լաւ է՞ հա, որ բոլոր Եւաներուն պատճառաւ մենք կըտանջւինք...

Ա՜խ Եւաներ... ձեր բոլորի դատաստանը ինձ տային, ձեզ դիփունիդ բիթուն նալօժ էնէի Ղալայչի Մարգարին վրայ, օր ձեզ մէկ լաւ մը ղալայէր...

Ան ժամանակը Աթամը Եւին խաթեր դրախտից զրկեց, հըմա մեր Եւաները իրենց աստ անտեր մօդաներով մեր գրպանից գօղալ-գօղալ թումանոցներ կըխոկին...

Է՛, Ղալայչի Մարգա՛ր, Բագւից թաղա մօդնի մադմազելներ խրկիմ կը քեզի նալօժնի-պլատեժով. շուտ ղալայէ ու հետ խրկէ... Ջակաղ շա՛տ.. շտէ անքան ղակաղ ղրկիմ օր գլնքդ քեզ կորցնիս...

Խուրէն-Ժան-դը-Ռիւլ

---

## ԼՐԱՏՈՒ

Վերջերս ինչպէս լսեցիք մի քանի հայեր կտակներ են արել բարեգործական նպատակներով, այժմս մեզ հաղորդում են, որ մի սուար խումբ հարուստ հայերից էլ մըտադրութիւն ունեն նոյն օրինակին հետևելու։

Խոր ծերութեան հասակում վախճանեցաւ հայ պահպանողութեան ամենախոշոր պետ երբեմն «Մեղու Հայաստանի» խմբագիր Պետրոս Սիմոնեանը։

Պահպանողականները նրան յաջորդ ուզում են ընտրել կամ Լէօյին, կամ Համբ. Առաքելեանին և կամ Յով. Թումանեանին։

—

Ղազարոս Աղայեանը անցեալ օրը իրեն համեմատելիս է եղել հանգուցեալ Լև Տոլստոյի հետ, և վերջը այն համոզմանն է եկել որ ինքը անհամեմատ աւելի մեծ է (բոյով) քան Տոլստոյը։

—

Ինչպէս յայտնի է, որժանայիշատակ Աթանաս Ժամհարեանը Կովկասում երկրագործութիւնն ու գիւղատնտեսութիւնը զարգացնելու նպատակով կտակել է մի խոշոր գումար, այժմս Թիֆլիսում մի խումբ վաճառականներ մտադիր են դիմել նրա եղբայրներին և խնդրել, որ իրենց բանկի բաժանմունք էլ հիմնի... բարեգործական նպատակով իրենց օգնելու համար։

## ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ

(Վ. Դորոշևիչի)

Ընդունելութեան օրը, ընդունելութեան ժամին մինիստր-նախագահի ընդունարանը մտաւ այցելուն և հրճւանքով ժպտաց։

—Ահա՛ և մենք։

Եւ քաղցր ձայնով աւելացրեց.

—Ողջո՜յն, Պեօտր Արկադևիչ։

Մինիստրը մտածմունքի մէջ ընկաւ։

«Դէմքը ծանօթ է... Եւ՝ Պեօտր Արկադևիչ է կոչւում... Հաւանական է ծանօթ լինի»...

—Խնդրեմ... քաղցրութեամբ ցոյց տւեց բազկաթոռը պրեմիերը։—Շատ ուրախ եմ!...

—«Որտեղ եմ տեսել ես այդ դէմքը»... մտածում էր մինիստրը։

Քնքոյշ պարոնը նստեց և նորից ժըպտաց.

—Մոռացել էք մեզ, Պեօտր Արկադևիչ։

«Զարմանալի ծանօթ դէմք է», գլուխը տանջում էր մինիստրը. «ո՞վ կարող է լինել արդեօք»։

—Մոռացե՜լ էք։

«Եւ զուցէ լաւ ծանօթ մարդ է»։

Մինիստրը փոքր ինչ շփոթւեց և ասաց.

—Ինչ էք ասում, ի՜նչ էք ասում... Ներեցէք... Ինչպէս կարելի է այդպիսի բան մտածել... «Իսկապէս չեմ յիշում թէ՝ որտեղ եմ տեսել այս մարդուն։ Բոլորովին չեմ յիշում»...

Իսկ գեղեցիկ պարոնը քնքոյշ ժպիտը դէմքին օրօրեց գլուխը և մինչև անգամ հառաչեց.

—Եւ մեր տան ճանապարհն էլ մոռացել էք... Գոնէ մի որևէ...

Մինիստրի դրութիւնը աւելի ու աւելի անյարմար էր դառնում.

—Գիտէք, իմ պաշտօնս այնպէս է որ... Դուք չէիք կարող երևակայել... Մի անգամ ցանկանում էի որ... ամբողջ հոգով ցանկանում էի որ... Բայց անկարելի է։ Մի ազատ րոպէ չունիմ։

Մինիստրը շարժեց ձեռքը՝ «եղել է չի եղել»։

—Քանի անգամ պատրաստւել եմ ձեզ մօտ գալ։ Սակայն մի [illegible] է հանդիսանում։ Մերթ [illegible]

«Իսկ շատ հետաքրքիր է իմանալ թէ՝ ով է սա»։

—Իսկ մերոնք ինչպէս են ձեզ կարօտել, շարունակում էր տրտնջալ գեղեցիկ պարոնը։—Է՜հ, շատ սպասեցինք, սպասեցինք։ բայց վերջը յոյսներս կտրեցինք։—«Պեօտր Արկադևիչը մոռացել է մեզ, ասում էին,—մոռացել է»։

«Երևի հարևան կալւածատէր է»,—հանգստացաւ մինիստրը։

—Այո՛-ս, այդպէս տրտնջում են.—«Պեօտրը Արկադևիչը մեզ ճանաչել չի ուզում», ասում են։

—Ներեցէք... Ինչպէս նրանք չեն ամաչո՞ւմ... Ինչպէս կարող են... այդպիսի մըտքեր... Դուք, գիտէք, ես միշտ այդպիսիների հետ... այնպիսի համակրանքով... «Կարող է լինել և մինչև անգամ մի որևէ ազգական», մտածեց մինիստրը և շարունակեց.—...միշտ առհասարակ... Բայց նրանք ի՞նչպէս... ի՞նչպէս ձեր...

--Է՜հ, ապրում ենք այսպէս։ Սովորականի նման։

- Եւ փառք Աստծու, փառք Աստծու... Այդ, գիտէք, ամենալաւ բանն է՝ ապրել «սովորականի նման»։ Բոլոր այդ ոչ սովորական «հանգամանքները»... Ա՜հ, դրանք էլ... Աստւած դրանց հետ... Իսկ ապրել, իսկապէս այնպէս, ինչպէս գեղեցիկ արտայայտւեցիք դուք՝ «սովորականի նման»—հրաշալի է։ Այդ իսկական... իդեալ է։

—Աշխատում ենք, արտասանեց այցելուն։

«Անկասկած կալւածատէր է»։

—Շատ լաւ, շատ գեղեցիկ։ Հաճելի է լսել։ Խրախուսիչ խօսքեր...

—Աշխատում են, այո, բայց, ոչինչ...

«կալւածատէր է»։

—Զպէտք է իրան վհատութեան մատնել։ Պէտք է համբերել, գիտնալ։ Պէտք է աչալուրջ, խիզախ լինել։ Զպէտք է ձեռքերը խաչել։ Այո՛։ Ռուսաստանին հարկաւոր է եռանդ։ Այո՛. եռա՜նդ...

Սիրալիր պարոնը շարժեց գլուխը։

—Բայց, յամենայն դէպս, դուք մոռացել էք մեզ, Պեօտր Արկադևիչ։ Մոռացել էք։

«Ահա թէ ինչ-հէնց իրա մասին է խօսում։ Թւում է թէ սա լուրջ, հարևանաբար մտածում է, որ ես ժամանակ ունիմ գնալ Սիմբիրսկի նահանգը ղոնաղ (հիւր)։

—Ո՛չ... լուրջ... հաւատացնում եմ ձեզ... այնպէս յարմար ժամանակ չպատահեց դէպի ձեր կողմերը գալ։ Ես այս ամառ Սիբիր գնացի։ Հրաշալի երկիր է, ասաց մինիստրը, որպէսզի խօսակցութիւնը փոխի։

—Դուք չէ՞ք եղել Սիբիրում։

—Աստւած ողորմացել է։

—Սքանչելի երկիր է։ Մի որևէ Մինուսինսկ *)։ Ձմերուկներ։ Այո՛։ Կարո՞ղ էք ե-

*) Քաղաք է. գտնւում է Սիբիրի Ենյսկի նահանգում։ Ծ. Թ.

## ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԸ



—Մենք պէտք է միմեանց հասկանանք, օրինակ եթէ հաշտարար դատարանում ես տարեմ, դուք կանցկացնէք գործը նահանգական դատարանում։
—Երբ այնտեղ ես տարեմ, դուք կանցնէք պալատը։
—Այնտեղից դուք Սենատը—և դա այն օգուտը ունէ, որ մենք...
—Հասկանում եմ, սկզբունքով համաձայն եմ։

## Օ Տ Ա Ր  Ի Ւ Մ Ո Ր



### Պ Ա Տ Մ Ա Կ Ա Ն

—Ինչ կասես, սիրելիս, ճիշդ չէ՞, որ այս հանդերձի մէջ ես յիշեցնում եմ Լիւդովիկոս Տասնեչորրորդի ժամանակները, այն ժամանակուայ կանանց։
—Դուք աւելի շուտ այն ասէք, թէ քանիերորդ Լիւդովիկոս էք փոխել—եթէ չեմ սխալւում քսանևհինգերորդը... չէ։

## Օ Տ Ա Ր  Ի Ւ Մ Ո Ր



--Ձեր ազգը ի՞նչպէս է։
—Ալէք. Իվանիչ Գուչկով։
—Գուչկո՞վ, ձեզ որտե՞ղ եմ տեսել։
—Պետական Դումայում, ես այնտեղ նախագահ եմ։

—Այդ ինչ Պետական Դումա է...
—Պետական Դումա, ձերդ ...ութիւն։
—Հը՞... չեմ յիշում։

բնակայել ձեզ:— Զմեռուկնե՛ր:

—Գոնէ այդ ժամանակ մի փոքրիկ նամակ գրէիք:

«Փոքրիկ նամա՛կ: Այդպէս էլ կայ: Սա անպատճառ գիւղում է ապրում: Թէ ասում եմ՝ «կորի՛ այստեղից»: Բայց միշտ հօ Աստուած չի տայ, որ ես մինիստր լինեմ: Հաբեան... կալւածատէր է... անյարմար է»...

—Բայց իմ պարապմունքս... պարապմունքս: Մինիստր... չէք կարող երևակայել ձեզ թէ՝ այդ ինչ սարսափելի պաշտօն է... Ուղղակի գրիչ առնելու ժամանակ չկայ... Հաւատո՞ւմ էք: Ուրիշ պետական մարդիկ... այսինքն արտասահմանեան առանձնապէս... ժամուարներ (յիշատակարաններ) են գրել: Դուցէ նրանց մօտ, այնտեղ արտասահմանում ամեն ինչ ինքն իրան մի կերպ արւել է... Իսկ այստեղ... նոյն իսկ վայրկեաններ...

—Ամեն կողմից հարցնում են ինձ, խօսեց այցելուն,—թէ՝ «Մօտաւորապէս ի՞նչ է գրում ձեզ Պեօտր Արկադևիչը:— Նամակ ստացել էք Պեօտր Արկադևիչից և այլն»: Ուղղակի ամաչում եմ մարդկանց աչքերին նայել:

—Ինձ, իսկապէս, անյարմար է... բայց, Աստուած վկայ... «Երբ կըհեռանայ սա արդեօ՞ք»:

—Վերջապէս կարող էիք հեռախօսի միջոցով գոնէ մի երկու խօսք...

—«Հեռախօսո՞վ: Երևի ձմեռը գիւղից տեղափոխւել էր Պետերբուրգ: Այդ էր պակաս»:

—Գէթ մի երկու խօսք... յիշէիք գոնէ... Մինիստրի ճակատին քրտինք երևաց:

—Երևակայեցէք...

Նրա ձայնի մէջ վհատութիւն էր նշմարւում:

—Երևակայեցէք: Հազար անգամ պատրաստւել եմ հեռախօսով խօսել, բայց ձեր հեռախօսի № մոռացել եմ, իսկ հեռախօսական գիրքը սեղանի վրայից կորել էր:

Նա արդէն խօսում էր զայրոյթով և հեգնանքով, իրան դժւարութիւն չէր տալիս մտածելու և առաջին գլուխն եկած միտքը ասում էր:

Սիրալիր պարոնը զարմացած նայում էր մինիստրին: Քիչ յետոյ նա փողաքսակից հանեց այցետոմսը և ասաց.

—Ահա այստեղ կայ №-ը... Ես կըթողնեմ ձեզ այցետոմսս, որովհետև երբեմն, գիտէք, պատահում է... № գրում ես—իսկ ո՞ւմ №-ըն է, թէկուզ գլուխդ կտրի՝ չես կարող յիշել:

—Այո՛, պատահում է:

—Այդպէս, ահա ձեր սեղանի վրայ թողել եմ իմ այցետոմսը:

—Գէթ գրասեղանի վրայ:

—Այո՛ աչքի ընկնող տեղ է:

Լռեցին:

—Ներեցէք... բայց անյետաձգելի... պետական գործեր...

—Այո, ես հասկանում եմ, ինչպէս էք զուք զբաղւած,—բարձրացաւ տեղից հաճելի պարոնը:

Մինիստրը նորից դարձաւ սիրալիր և քաղցրաբարոյ:

—Ցտեսութիւն: Ցտեսութիւն:

Եւ մինիստրը բռնեց այցելուի ձեռքերը:

—Այդպէս, չմոռանաք: Հ՞ը. քանի ամիս է...

Մինիստրը այդպէս նրա ձեռքերը բռնած մօտեցաւ դրանը:

—Ո՛չ, ո՛չ... Ինչ էք ասում... և՛ հեռախօսով, և՛ նամակով, և՛ անձամբ կըտեսակցեմ ձեզ...

—Այդպէս ուրախացրէք:

Ողորմած եղէք, այդ ինձ մեծ հաճոյք է... Բարևեցէք ձեր բոլոր... իմ սրտագին ողջոյնս:

—Ցտեսութի՛ւն: Յուսով եմ, որ շուտով...

—Անպայման, անպայման: Ցտեսութիւն, ցտեսութի՛ւն:

Մինիստրը մինչև անգամ կանգնեց դռների մէջ, համոզւելու համար, թէ նա, իսկապէս դուրս է գնում:

«Զափազանց քաղցր պարոն է: Ամեն մի դէպի կեանքի մասին ունեցած ախորժակ սա կարող է փչացնել: Միայն, հետաքրքիր է, թէ ո՞վ է սա»:

Մինիստրը մօտեցաւ գրասեղանին, վերցրեց այցետոմսը և կարդաց.

«Ալեքսանդր Իւանովիչ Գուչկով»:

—Գուչկո՞վ. Գուչկո՞վ: Ա՜... ինչ որ յիշում եմ: Այդպիսի ազգանուն կայ:—Յիշում եմ: Մօտաւորապէս յիշում եմ...

Մինիստրը շարունակեց կարդալ այցետոմսը.

«Պետական Դումայի Նախագահ»:

Մինիստրը այցետոմսը կամաց դրեց սեղանի վրայ:

Պետական Դումա՞: Ի՞նչ է: Պետական Դումա...

Մինիստրը սրբեց ճակատը:

—Պետական Դումա՜...

Նա բռնեց կզակից:

—Պետական Դումա՞:

Եւ նա անհաստատ կերպով ուսերը վեր քաշեց:

—Չե՛մ յիշում...

**Ֆօն-Սեեճօնսոն**

## ԽԵԼԱՑԻ ՏԱՆՈՒՏԷՐԸ

Կարինի գաւառի Պարխալ աւանի գիւղերից մէկի ճանապարհին գիւղացիք գտնում են ռուս զինւորի մի հատ կօշիկ (սապօգ) զարմացած այդ տարօրինակ իրի վրայ գիւղացիները իրար են հարցնում նրա ինչ լինելու մասին: Մէկը ասում է որ աղաման կարող է լինել: Միւսները ուրիշ բաների են նմանեցնում, բայց ոչ ոք ճշմարտութեամբ չէ կարողանում որոշել: Վերջը տխրւած տանում են տանուտէրի մօտ և նրանից բացադրութիւն պահանջում: Տանուտէրը տեսնելով երկարավիզ կօշիկը զայրացած բացականչում է: Աւանակներ չէք կարողանում այդքան հասարակ բան հասկանալ, որ վերցրել ինձ մօտ էք բերել: Նադուր (ինչ է) հարցնում են [illegible] բերաններ: «Նադուր [illegible] կլիֆի դուր» (բահի պատեան է) յաղթական կերպով պատասխանում է տանուտէրը և գիւղացիք ապշում են նրա իմաստութեան վրայ:

**Խարդեաօ**

—

## ԴԱՏԱՐԱՆՈՒՄ

*Դատաւորը.*—Քեզ մեղադրում են, որ դու կամենում էիր Միրզոյեանի ժամացոյցը յափշտակել:

*Մեղադրեալը.*—Ո՛չ, պարոն դատաւոր. ես կամենում էի իմանալ՝ թէ ժամը քանիսն է:

## ԼԵՒ ՏՈԼՍՏՈՅԻ ՄՏՔԵՐԻՑ

(Կեանքի եւ մարդկանց մասին)

Դժբախտութիւնը և չարիքը առաջանում է ո՛չ այնքան նրանից, որ մարդիկ չեն իմանում իրանց պարտականութիւնները, որքան նրանից, որ նրանք ընդունում են կեղծ պարտականութիւններ, որ նրանք իրանց պարտականութիւնը չեն համարում այն, որ իսկապէս իրենց պարտականութիւնն է և պարտականութիւն չեն համարում, առհասարակ այն է, որ և հէնց նրանց գլխաւոր պարտականութիւնն է:

—

Բոլոր մարդիկ ապրում և գործում են մասամբ այլ մարդկանց մտքերով: Թէև մարդիկ որչափ են ապրում իրենց և որչափ ուրիշների մտքերով, հէնց դրանում է կայանում մարդկանց միջև գոյութիւն ունեցող ամենագլխաւոր տարբերութիւններից մինը:

—

Մարդս գիտակցաբար ապրում է իրեն համար, բայց ծառայում է իբր անգիտակից գործիք ընդհանուր մարդկութեան նպատակներին ձգտելու համար: Կատարւած արարմունքն անդառնալի է, և նրա գործողութիւնը՝ զուգադիպելով ժամանակով այլ մարդկանց միլիոնաւոր գործողութիւններին. ստանում է պատմական նշանակութիւն:

Որքան մարդ բարձր է կանգնած հասարակական սանդուխքի վրայ, որքան շատ մարդկանց հետ կապեր ունի, այնքան էլ ակներև է նրա արարմունքի նախաորոշումն ու անխուսափելիութիւնը:

—

Միայն այն ազգերն ապագայ ունեն, միայն այն ազգերին կարելի է պատմական կոչել, որոնք ունեն նուրբ զգացութիւն դէպ այն բոլորը, ինչ որ կարևոր և անհրաժեշտ է իրանց հաստատութիւններին, որոնց նրանք թանգ են գնահատում:

ეროვნული ბიბლიოთეკა

## ՊՈՍՏԱՐԿՂ

**Օր. Մաֆրուհի.** Տարածութեան մէջ, որովհետև նամակիցդ չէ երևում թէ որտեղից էք գրում: Մենք Ձեզ ի նկատի կունենանք: Թէև Ձեր սիրոյ համար ազատ տեղ չունենք,—«վականսէա» չըկայ. եթէ երբևէ-ցէ տեղբացւի, Ձեզ իմացում կըտանք:

**Անապա. Տիկ. Բու...եանին.** Ասում էք, որ այդ տեղի ցեղը օգնում է, կարելի է. այստեղը ցեխը չէ օգնում, խիստ է ցեխոտում:

**Արմաւիր. Շահ-Նազարին.** Եթէ հաւատանք կըսպասենք, բայց չենք հաւատում:

**Աստախան. Հայկին.** Ինչու չէ.

**Լէնքորան. Այո.**

**Պարսկաստան. Բաժանորդներին.** Խնդրում ենք բաժնէգները լաւ տեղեկացէք և լրիւը ուղարկեցէք. որովհետև միքին շատոտ մարդիք էք:

**Թեհրան.** Զ. Մ. Ձենք կարող.

**Նալկարա.** Օր. Մ. Բ. Մ.-Ե. հանրին: Եթէ լինի լաւ կըլինի. բայց..

**Կ. Պոլիս.** Ժան-Պուլինչին: Բարեններս:

——-»»»:::():::«««——

## ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ


ԻՒԱՆ ՋԱՔ. ՏԷՐ-ՍՏԵՓԱՆԵԱՆԻ

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԴՊՐՈՑ

ԱՐՏՕՆՈՒԹԻՒՆՆԵՐՈՎ.

ՀԱՃԽԱՊԱՀԱԿԱՆ

ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ

Խնդրագրերն ընդունւում են մինչև յունւարի 15-ը. Բագեզժայա փողոց, № 19. Վոբոնցովի արձանի դիմաց: 0—2

---

ԲԺԻՇԿ

Արտաշէս Տիեան

վերադառնալով արտասահմանից վերսկսեց հիւանդների ընդունելութիւնը իր ՆՈՐ ԲՆԱԿԱՐԱՆՈՒՄ, Գանովսկայա փողոց № 15.

50—46

---

ԲԺԻՇԿ

Ե. Ի. Մինասեանց

Ներքին և երեխայոց և ստամոքսա-աղիքային հիւանդութիւնների, պրօֆ. MATHIEU-ի մասնագիտական կլինիկայից Պարիզում:

Ընդունելութիւնը առ. 9—11 ժ. երեկ. 5—7 ժ.: Ելիզաւետինսկայա, 39: 100—46

---

Ցանկանալով մեր բոլոր բաժանորդներին ամենայն տեսակ բարիք, մենք խորհուրդ ենք տալիս բաժանորդագրւել և ամենօրեայ հայերէն ամենամեծ ու օգտակար

III ՏԱՐԻ **ՍՈՒՐՀԱՆԴԱԿ** III ՏԱՐԻ

Գրական, քաղաքական, հասարակական և առևտրա-արդիւնաբերական լրագրին, որ դեկտեմբերի 1-ից հրատարակւում է ամեն օր, այն ուղղութեամբ և այն ծրագրով, որ ունեցել է սկզբնաւորութեան օրից և որը գոհունակութիւն է պատճառել ընտիր և բանիմաց հասարակութեանը:

«ՍՈՒՐՀԱՆԴԱԿԻ» տարեկան բաժնեգինն է 10 ր., կէս տարւանը 6 ր. Սակայն «ԽԱԹԱԲԱԼԱ»-ի բաժանորդների համար պատրաստ ենք զիջել և տալ հետևեալ գներով.

„ՍՈՒՐՀԱՆԴԱԿ" և „ԽԱԹԱԲԱԼԱ" միասին

Տարեկան . . . . 12 ր. ◎ Երեք ամիսը . . 4 ր. — կ.
Կէս տարին . . . 7 ր. ◎ Ամիսը . . . 1 ր. 50 կ.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція „Сурандакъ",
Հեռագրով՝ Тифлисъ, „Сурандакъ"

---

ԱՆՊԱՏՃԱՌ ՊԱՀԱՆՋԵՑԷՔ

ԱՄԵՆ ԽԱՆՈՒԹՈՒՄ

„ՋԵՖԻՐ"

պապիրոսներ

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՏԱՆ

ԵՂԲ. ՍԷՖԼԱՆՈՎՆԵՐԻ

ԹԻՖԼԻՍՈՒՄ 000—126

---

ВСѢМЪ—ВСЕГДА—ВЕСЬМА НУЖНО

„ГУРЪ-ГЕРЪ"

IV. Ч. I.

Способъ быстраго, легкаго и точнаго исчисленія процентныхъ и другихъ денежныхъ интересовъ отъ минимума до максимума.

Вычетъ $^0/_0$ $^0/_0$. 5% государственнаго налога. Дисконтъ. Процентное число. Стоимость 1-го, 2-хъ, 3-хъ и 4-хъ поленныхъ саж. дровъ въ вершкахъ. Цѣна пуда въ фунтахъ. Годовой приходъ въ дняхъ. Цѣна и количество товаровъ.

СКЛАДЪ У АВТОРА

Адресъ: **Кавказъ, Александрополь, Петру Д. Гайказуни.**

**ЦѢНА ОДИНЪ РУБЛЬ.** 10—5

Изобрѣтеніе того-же автора:
„ГУРЪ-ГЕРЪ" I. Указатель процентовъ цѣна . . . . . . 80 коп.
„ГУРЪ-ГЕРЪ" II. Исчислитель процентовъ „ . . . . . . 50 „
„ГУРЪ-ГЕРЪ" III. Табличка . . . . . . „ . . . . . . 5 „


Խմբագիր-հրատարակող. ԱՍՏ. ԵՐԻՑԵԱՆ

Элoктропечатня Т-ва „Культура", Вельяминовская, 18.




**ԽԱՏԻՍԵԱՆ ԵՒ ՍՏԵՓԱՆԵԱՆ.**

Քաղաքացինե՛ր, վտանգը մեծ է, քաղաքը պաշարուած է մկներով, լեռով, բացիլներով եւ այլ չարաննեգ թշնամիներով... այդ պատճառով այսօր պատուիրում ենք՝ կռիւ մղել—յաղթութիւնը անկասկած մերը կլինի, թո՛ղ հնչեն փողերը:

Ցառաջ-յառաջ. Տրիմ տամ, տամ-տամ տըմ տամ—տարիփա լա՛։